

ՏԱՆԱԱԽՈՍԱՎԱՆ

ԴԱՅԱՅԻՆ ԿԱՌՈՂԻԿՈՍ ՏԵՐ ԶԱՔԱՐԻԱՅԻ ՄԵՐ ՏԵՐ ԴԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՍՎԾ ԶԱՐՈՁԸ¹

1. Մեծն Ղոկասը գրում է. «Հոռոմի Տիբերիոս կայսեր տերության տասնհինգերորդ տարում, Հրեաստամի Պիլատոս Պոնտացու դատավորության և Գալիլիայում Հերովդեսի չորրորդապետության ժամանակ Տիբեր խոսք Զաքարիայի որդի Հովհաննեսին անապատում լսելի եղավ» (Հմտ. Ղոկ. Գ 1-2):

Եվ արդ, այս Ղոկաս ավետարամիջը նաև Տիբեր մկրտության մասին է ժամանակագրում, որպեսզի խոսքը և քարոզությունը հավատարիմ ու ճշմարիտ դարձնի: Որովհետև այսպես է գրում. «Հիսոս մկրտվելիս շուրջ երեսուն տարեկան էր» (Ղոկ. Գ 23): Աշխարհազդի ժամանակներն է ցուց տալիս, որ Օգոստոս կայսեր քառասուներկուերորդ տարում է եղել, իսկ Օգոստոսն իշխանությունը ընդամենը հիսունվեց տարի է վարել: Եվ արդ, քառասուներկուսից հիսունվեց տասնհինգ տարի է լինում, նաև [գումարած] Տիբերիոսի տասնհինգ տարիները, որ երեսուն է լինում, երբ անժամանակ Լուսը մկրտության է զայիս՝ այս աշխարհին մտցերի աղտից մաքրելով: Ըստ հրեա Հովսեփոս ժամանակագրի՝ Տիբեր մկրտությունը Հերովդես չորրորդապետի տասնյոթերորդ տարում է եղել: Եվ արդ, Տիբեր ծնունդը երովմայեցի Անտիպատրոսի որդու՝ Հերովդես Առաջինի երեսուներեքերորդ տարում ես գտնում: Որովհետև երբ [Հիսոս] Բեթղեհեմում ծնվում է, քառասուն օր հետո ըստ օրենքի տաճար է բերվում, [այնուեղից] էլ նազարեթ տարվում: Իսկ այն տարվա վերջում ծնողները նրան Երուսաղեմ են բերում, ինչպես և Ղոկասն է պատմում. «Ամեն տարի նրա ծնողները նրան Երուսաղեմ են տանում» (Ղոկ. Բ 41), Երուսաղեմից էլ Բեթղեհեմ են անցնում:

2. Եվ ահա մողերը Երուսաղեմ են մտնում և աստղով առաջնորդվելով՝ Բեթղեհեմ են գալիս: Դրա համար Հերովդեսն աստղի երալու ժամանակն ասուցելով, [իր մարդկանց] ուղարկում է և կոտորել տալիս Բեթղեհեմի մանուկներին: Իսկ Հովսեփին Աստծո հրեշտակի հրամանով մանկան ու նրա մորը վերցնում է և Հերովդեսի երեսունհինգերորդ տարում Եղիպտոս իշնում: Փրկիչն էլ Եղիպտոսում երկու տարի է մնում, [մինչև] երեսունյոթերորդ տարում Հերովդեսը վախճանվում է: Մանուկը Եղիպտոսից Հրեաստան է գալիս, և անժամանակ Որդին ըստ մարմնի չորս տարեկան էր:

Իսկ երբ Հովսեփը լսում է, թե Առքեայոսն է թագավորել իր հոր՝ Հերովդեսի փոխարեն, Նազարեթ է անցնում և ինը տարի թագավորում, իսկ Տերը ըստ մարմնի տասներեք տարեկան էր: Հերովդես չորրորդապետի տասնհինգերորդ տարում էլ Աստծո մարմնացած Բանն ըստ մարմնի երեսուն տարեկան էր:

¹ Աշխարհաբարի վերածումն ըստ Բետկալ Բրատարակության. Զաքարիա Կաթողիկոս Զագեցի, Ծառը, աշխատահրությամբ Հ. Պողոս Անանյանի, Վեմետիկ, Ս. Ղազար, 1995, էջ 33-66:

3. Ինչո՞ւ է կայսրը Հրեատանում չորրորդապետեր կարգում: Որովհետև [երբ] Հերովդես իր որդի Արքեղայոսի համար որպես առաջին կին մարաց թագավորի դստերն է բերում, կայսեր մեջ կասկած է առաջանում, որ [չիհնի թեն] իրենց քրոջ համար արշավեն և ապստամբություն բարձրացնեն: Իշխանությունը չորս մասի է բաժանում, որ միշտ իրար հանդեկ հակառակ մնան: Իսկ Պիհատոս Պոնտացուն Երուսաղեմում բոլորի վրա ոստիկան է հշանակում:

Իսկ այն մասին, որ գրված է, թե Աննայի և Կայիափայի քահանայության ժամանակ [Է եղել]. օրենքը մեկ քահանայապետ է հրամայում կարգել բոլոր այն օրերի համար, քանի դեռ վերջինս կենդանի է լինում: Քանի որ Հերովդեսը քահանայապետերից էր իշխանությունն ստացել, ինքն էլ ալլազգի էր և չէր համարձակվում որևէ մեկին քահանայապետությունը երկար ժամանակով տալ, որպեսզի զորանալով այն չգրավեն, - այլ ամեն տարի [նրանց] փոխում էր, որպեսզի անզոր և իրենց գործերում տկար մնային:

«Այս ժամանակ Տիրոց խորք ուղղվեց Հովհաննեսին անապատից Հորդանամի կողմերը գալ և իսրայելին ապաշխարության մկրտության կանչել» (Բմմտ. Ղուկ. Գ. 2-3): Մկրտության քարոզությունն իսրայելում նոր էր, որովհետև մարգարեներից ոչ ոք այդպիսի մկրտություն չէր քարոզել: Բայց այն մարդու սքանչելիքների համար, որ տեսան, և զրա ծննդյան վրա [եղած] հրաշքերը լսեցին, թե ինչպես ամլորդի հորը անձայն պապաննեցրեց անձայնությամբ, և [Հովհաննեսը] Խարիսկի և Սամուելի նման աղոթքների պտուի էր և քազու ճգնություններով էր իր ժամանակն անապատում անցկացնում, - դրա համար նրա քարոզությանը հեշտությամբ հավատացին: Նաև ոմանք նրան Քրիստոս էլ կարծում էին, որովհետև փարիսեցիներով նրա մոտ [մարդ] ուղարկեցին և ասացին. «Դո՞ւ ես Քրիստոս» (Բմմտ. Ղովհ. Ա. 15):

4. Մեր Տիրոց զալուստը կրկնակի է. առաջինն անսելի և ծածուկ է եղել, ինչպես անձնը՝ զեղմի վրա: Երկրորդ անգամ երկնքի ամպերի միջով արփիափայլ փառքով և հրաշափան ճառագայթներով է զալո՛ւ արարածներին հրակիցելու: Ինչպես Եղիան է պատրաստ պահիվում երկրորդ զալստյան կարապետով լինելու, այնպես էլ Հովհաննեսն առաջին զալստյան կարապետն է եղել: Որովհետև նրա ծնունդը վեց ամիս առաջ քարոզվեց, քան Տիրոց երկնքից իշնելու ավետիսը, որովհետև նրա Ակատմամբ սքանչելիքները հրաշափառորեն կատարվեցին, քան այլ մարգարեների նկատմամբ. սրանք ծնվելուց և կատարյալ հասակի զալուց հետո մարգարեացան, իսկ նա որովայնից սկսած մարգարեացավ, որովհետև իր մոր որովայնում վեց ամսական էր, երբ անպարփակելի Աստծուն Սուրբ Կույսի որովայնում տեսավ. իր մոր որովայնում էլ իր Տիրոջը երկրպագեց: Ինչպես մեծն Եղիան, նոյնպես էլ սա խիստ և անվայելու² կյանքը էր անապատում ապրում, ճգնավորի կյանքը, անպանույն զգեստներով և տաժանելի չարչարանքներով իր կյանքի տարիներն անցկացնում:

[Հովհաննեսը] Տիրոց խորքով Հորդանան է զալիս, ազդու ձայնով իսրայելին Բանն Աստծո երկիր զալուստն ազդարարում: Հովհաննեսը որպես «բաներեգես» է հայտնի, ինչպես Բանն Աստծո մասին է հոչակել. «Ահա Աստծո Գառը, որ աշխարհի մեղքերը վեցցնելու եկավ» (Հովհ. Ա. 29): Ինչպես Զաքարիան է ազդարարել. «Դո՞ւ, մանո՞ւկ, Բարձրյալի

² Ճգնակեցության իմաստով:

մարգարեն պիտի կոչվես, որպեսզի Տիրոջ առաջից գնաս՝ Արա ճամապարհները պատրաստվու» (Ղոկ. Ա. 76): իսկ երգ երգոցում գրված է. «Տատրակի ձայնը մեր երկրում լսելի եղավ» (Երգ. Բ. 12): Ամուսությունից բաժանված տատրակը դալար ուստերին չի ճայռա, այլ միշտ չորին. Շուն ձևով Հովհաննեսն էլ, իրեն փափկությունից և այս կյանքի վայերը ներից գրկելով, ծոմաջան նեղություններ տանելով, չոր ու գուացած անապատի բնակիչ դարձավ:

5. «Անապատում կանչողի ձայնն է. պատրաստեցե՛ք Արա ճամապարհները» (Մարկ. Ա. 13, հնմտ. Ես. Խ 3), Արա, ով մարմնով այսօր Հորդանանի հոսանքներում երևաց: «Եվ հարթեցե՛ք Հակորի Աստծու շավիդ Աերը», որովհետև Հակորի Աստված, որ Մովսեսի միջոցով իսրայելի որդիներին էր հրաշքով առաջնորդում, Եղիպտոսից Փառանի անապատն էր քշում: Արա նա Հորդանանի կողմերը եկավ, քանի որ Հորդանան «Նրա Էջը» է թարգման քշում, քանզի այստեղ այսօր Հորից անսովոր Լոյսը մարմնով իշավ, ում Դավիթը Վերևից օրինում էր. «Թաքրո՞ւ ու Հերմոնը քո անոնուկ եմ ցնծում» (Սահմ. ԶԼ 13): Դարձալ ասում էր. «Նրա համար քեզ Հորդանանի երկրից ու Հերմոնի փոքր լեռից հիշեցինք» (Սահմ. ԽՍ 7): Հերմոնն այն տեղում փոքր սար է, որ Հորից ուղարկված Բանը եկավ-իշավ մկրտության համայն աշխարհի մեղքերը վեցոնելու: Զայնը Վերևից Վկայում է. «Դա՛ է իմ սիրելի Որդին» (Մատթ. Գ. 17), ինչպես որ այլակերպության ժամանակ Թաքրո լեռան վրա հայրական ձայնը Վերևից համազոր Որդուն է վկայել: Անձառելի Բանն Աստված այսօր Հերմոն լեռն է զալիս, որը մոտ է Հորդանանի հոսանքներին, իսկ Հոր անհասանելի ձայնի խոսքը՝ երկնքից: Զայնն ու հնչումը երկնքից որոտի համան ազդարարում էին ի վկայություն անսկիզբ Բանի: Եվ ասում է. «Դա՛ է իմ սիրելի Որդին» (Մատթ. Գ. 17): Թեաւետ նախախնամության համար Մարդու Որդի դարձավ, բայց ստուգապես ԽՄ (Հոր) Որդին լինելուց չփոխվեց, այլ [միշտ] մշտնչնապորակից է, ինչպես որ գրված է. «Տիրոջ ձայնը ջրերի վրա է, Աստված է՝ Հոր փառքով» (Սահմ. ԽԸ 3): Հայրը երկնքից որոտաց. ձայնի հնչմամբ անձառելի Բանին էր վկայում, Սուրբ Հոգին էլ աղավնու կերպարանքով իշնում էր:

6. «Եվ Տերն ինքը անսպա ջրերի վրա էր» (Սահմ. ԽԸ 3): Անժամանակ Բանն Աստված [է], որ աստվածախառն մարմնով Հորդանան գետի առատ ջրերի հորձանքների վրա էր: Դիրա համար էլ Սուրբ Հոգին աղավնու կերպարանքով էր իշնում, որպեսզի անմիտներից ոչ ոք չկարծեր, թե երկնքից ձայնը Հովհաննեսի համար եկավ, այլ Սուրբ Հոգին իշնելով՝ Աստծու Որդուն էր մատնացուց անում: Նրա համար իշավ, քանզի Սուրբ Հոգին, սկզբից ջրերի վրա շրջելով, ջրերը զանազան զեռունակությունների և սունկերի բազմացման համար էր կենդանածում: Այստեղ իշնելով՝ նաև Հորդանանն էր մաքրում ավազանի արգանդը բացելով, ինչպես և հեթանուների համար ճանապարհ բացելու և որդեգրության շնորհներ Վերակոչելու:

Հովհաննեսը Տիրոջ ծողովուրդներին պատրաստելու է ուղարկվել. նախ իսրայելին մկրտությամբ մաքրում էր, որպեսզի Աստվածորդուն հանդիպելու արժանի լինենի: Որով-

³ Ինչպես երևում է, Զաքարիա Հայրապետն աչքի առջև է ունեցել Ս. Եղիշիան Կիպրացու Արարածոց մեկնության հայերեն թարգմանությունը, որ կարդում ներ. «Պատի և Յորդանան ի մերս դարձուցանելով՝ «Էջ նորա» թարգմանի», Թակոր Քեռուեան, Ս. Եղիշիան Կիպրացու Աւետարանի մեկնության հայերեն թարգմանութիւնը, տե՛ս «Գանձասար» աստուածաբանական համելս, Բ. Զ, Երևան, 1996, էջ 151:»

հետու հնում, երբ Աստված փառքով պատրաստվում էր Խրայելի որդիներին երևալու, նախ Մովսեսը ժողովրդին ամպի և ծովի մեջ էր մկրտում և այդպես Աստծուն մոտեցնում, իսկ երբ մեզի և մրրիկի մեջ լսոն էր կամնում ելնել ու աստվածային ձայնին արժանանալ, - Տերը դիմեց Մովսեսին ու ասաց. «Թող մարդն իր մարմինը լվանա և իր հագուստները ողողի, Աստված էլ երրորդ օրը ձեզ կհայտնվի» (Բմնտ. Ղևտ. ԺԴ 9): Երբ պարզեների երկիրն էին մտնում, նախ Հորդանանով անցան, իսկ հետո մտան պարզեների երկիրը ժառանգեցին: Եղիան էլ նախ Հորդանանով անցավ և կառքով երկիրն բարձրացավ: Այսպես էլ Հովհաննեար, անապատից գալով, Խրայելին շրով մաքրում էր, որպեսզի Խրայելի Աստծուն ընդառաջ ելնելու արժանացներ, որ մարմնով եկավ՝ մարդու որդիների ցեղը փրկելու:

7. «Ժողովրդին մկրտելու ժամանակ Հիսուս Գալիլիայի կողմերից Հորդանան գետն է գալիս՝ Հովհաննեսից մկրտվելու» (Բմնտ. Մատթ. Գ. 13, Մարկ. Ա. 9), որպեսզի կատարվի մարգարեի խոսքը, որ ասում է. «Զաքուողն» երկիր (որովհետու Պետրոսն ու նրա եղբայր Անդրեասը Զաքուողն ցեղից կանչվեցին) և Նեփթաղիմի՛ երկիր (որովհետու Հակոբոսն ու նրա եղբայր Հովհաննեսը Նեփթաղիմի ցեղից էին), ժողովուրդ, որ խավարի մեջ էիր նատած, մեծ զիտուոյան լույսը տեսար» (Մատթ. Դ. 16, Ես. Թ 1-2), որովհետու այնտեղ բնակվեց և մեծացավ ըստ մարմնի Տերը, ում անբավելի և անպարազելի բնությունը երկիրն ու երկիրը չէին կարող ընդունել:

Եվ արդ, բոլորի Թագավորը Հորդանան է գալիս-իշնում, այն տեղը, որ Հակոբը գալով, Հորդանան ընկավ, երբ Խառնմից Քանանի երկիրն էր անցնում, այն զիշեր, երբ հրեշտակների բանակները տեսավ, Աստված էլ այն զիշեր նրա հետ գոտենարտում էր: Այստեղ հեթանոսներն ավազանի վերածնությամբ Քրիստոսվ զգաստավորվեցին, այս Հորդանանում ձեռք մեկնելով մարմնացած Աստծուն գոտենարտեցին: «Ով ձեռքն Աբրահամի զավակին երկարեց և ոչ հրեշտակներին» (Բմնտ. Եբր. Բ 16), ով Հեսսեի արմատից հեթանոսներին որպես ծաղիկ ընծայվեց:

8. Այստեղ Հակոբը մանուկներին չորս բանակների էր բաժանում Եսավի չար նախանձից փրկելու համար, ով չորս հարյուր մարդով Եղովմից սրտմուռթյամբ վրա էր հասել: Այստեղ Քրիստոս տասմերկու առաջալմերին ամբողջ աշխարհով մեկ ավետարանական քարոզության համար ուղարկեց, [ճամաց] կալեռիկուսներ կարգեց, որոնց ձեռքով Կաթողիկե Առաքելական Սուրբ Եկեղեցին առաջնորդվելով՝ անօրեն իշխանից փրկվում է: Այստեղ՝ Հորդանանի եզերքին, Աստված ձեռքը մեկնեց և Հակոբի ամուածիլն ընդարմացրեց: Խսկ այսօր հեթանոսներին ձեռք մեկնեց և բոլորի սիրտն ու միտքն ազատելով աշխարհիկ վայելքներից ձերբազատեց ու թնապարելով երկիրն բարձրացրեց: Հակոբն էլ կաղալով էր գնում, որովհետու ովքեր Քրիստոսվ պիտի փրկվեն, այստեղ՝ աշխարհում հալածանքների մեջ պիտի մնան: Քանի որ ասում է. «Արձակի՞ն ինձ»: Հակոբն էլ ասում է. «Թեզ չեմ արձակի, մինչև որ ինձ օրինեն» (ԾԱնդ. ԼԲ 26): Այս է որ եկեղեցին աղաղակում է. «Ո՞վ պիտի մեզ Քրիստոսի սիրոց բաժանի» (Հոռմ. Ը 25), մինչ Տիրոջից լսի. «Եկե՛ք, իմ Հո՛ռ օրինակներ, պատրաստված բարիքները ժառանգեցե՛ք» (Բմնտ. Մատթ. ԻԵ 34), «Եվ թող քեզ Հակոբ չանվանեն, այլ Խրայել, որովհետու դիմացար Աստծո հետ մաքառելին» (ԾԱԾ. ԼԲ 28): Ինչպես հեթանոսների մեջ Խրայել չանվանվեց, այսինքն՝ «աստվածա-

տես», այլ նոր և հրաշալի անոն դրեց, այսինքն՝ քրիստոնյաներ. «Դուք, որ Քրիստոսով մկրտվեցիք, Քրիստոսով եք զգեստավորվել» (Գաղ. Գ 27):

9. Տերն ու արարածների Արարիչն այսօր ծառալական կերպով Հորդանան է զայխ, այն տեղը, որ ղևատացիները Տեր Աստծո ուխտի տապանակը բարձրացրին, որ ցեղովքեաների վրա է նատում: «Եվ երբ ղևատացիների՝ տապանակը կրող մերի ոտքերը գետի այն մասը հասան, գետի ջուրը դարձավ և ընկրկեց. գետն էլ ցամաքեց, մինչև որ ժողովորդն անցնելն ավարտեց» (Բնմտ. Հետու Գ 13, 15-16): Իսկ այդ օրը ղևատացի Հովհաննեան անժամանակ Լուսի՝ մարմնացյալ Բանի հետ ջուրն է իշնում, իսկ Հորդանանը դառնում է վեր, որտեղից իջել էր, այսինքն՝ մեր մարդկային բնությունը վերատին իր տեղն է դառնում, որտեղից տարագրվել էր՝ վայելչական դրախտից: «Մինչև որ ժողովորդն անցնելն ավարտեց» (Հետու Գ 17). մկրտովյան ավագանն էլ անշարժ կա և կմնա մինչև մեր հավիտենական վախճանը⁴:

Իսկ տապանակը մերսից և դրսից նոկով էր պատված: Աստվածության և մարդու ության անճառ միությունը մի անձի և մի տեսակի մեջ է միավորված: Ինչպես որ տապանակը ոսկուց և փայտից տապանակի մի տեսակ [Է], այնպես էլ Քրիստոս աստվածությունից և մարդու ությունից մեկ Որդի [Է]: Իսկ այն, որ տասներկու քարեր վեցորդին և Հորդանանի եզրին [որպես] հավիտյան հավիտենից հիշատակության քարեր դրեցին, նշանակում է, թե ովքեր սուրբ ավագանով են լուսավորվում տվշությամբ և ավանդությամբ երջանիկ առաջալների ճշմարիտ դաշտանությանը հետևելով, - առև առաքելական վեմի վրա շինվածքներ կլիմեն⁵:

10. Հովհաննեան Աստծո Գաղի մասին այստեղ վկայեց. և աշակերտները նրանից լսեցին և հավատալով՝ մարմնացյալ Բանին հետևեցին: Այս վայրում Եղիան մաշկեան⁶ թիկնոցով Հորդանանի ջուրը բաժանեց, հրեղեն կառքը վարելով՝ երկինք բարձրացավ, իսկ թիկնոցը Եղիսեին տվեց, նույն հրաշքներն էլ [Հովհաննեաը] Հորդանանի վրա էր կատարում: Իսկ այդ օրը Քրիստոս մեր այս հողանուր բնությամբ Հորդանանը պատուեց-բաժանեց՝ Սուրբ Ավագանի արգանդը բացելու համար: Հեթանոսներին մեղ և անձուկ ճանապարհներ ցուց տվեց, Հոր մոտ՝ երկինք թևապարելով բարձրանալու համար, իսկ օծումն ու քահանայությունը սուրբ առաջալներին տվեց, ինչպես այն ժամանակ Եղիան մաշկեան թիկնոցը՝ Եղիսեին: Ինչպես Մովսեսն էր եղեգմայ տապանակով եզիատացիների՝ գետի հորձանքը մեռվում, Փարավոնի դուատրն էլ անզիտությամբ նրան սնուցանում էր եզիատացիների կորստյան և հարայելի փրկության համար, - այնպես էլ պարագրելի մարմնով Հորդանան է իշնում անպարագրելի ԲանԱ Աստված, ում կամակոր իշխանը շնանաշելով, ինչպես բոլոր մարդկանց, Տիրոջը ևս աշխատում է իր մենց գործերի մեջ բռնել, սակայն իր զորքերի բազմությամբ սատակելով կործանվում է տարտարոսի մեջ: Իսկ հարայելը մոռզվում է ավագանի վերածնությամբ՝ պարզների երկիրը կառուվ թևածելով: Մի ժամանակ երրայեցիների բանակի ջուրը Մեռայից էր քաղցրանում, իսկ այսօր Հորդանանն է

⁴ Հմտ. Եղիշէ, Մեկնութիւն Թեսուայ և Դատաւորաց, տես «Սորոյ Բօրմ մերոյ Եղիշէի վարդապետի մատեազմութիւնը», Վեմետիկ, 1859, էջ 168:

⁵ Նոյն տեղուն:

⁶ Կաշյա:

ամբողջ աշխարհին պարզվում: Մի ժամանակ Հակոբը երեք գավազան էր դնում, Լաբանից Բափիշտակված ոչխարհների վրա նշաններ դրոշմում: Նույնպես էլ Հովհաննեսի միջոցով սուրբ և համագոյական, միասնական, մարածամելի Սուրբ Երրորդությունը մարդկային ցեղին Հորդանանում ծանուցվեց, քանզի Որդին մկրտվում էր, Հայոց՝ վերևից վկայում, և Սուրբ Հոգին էլ՝ աղավանակերպ իշնում, հայտնված Երրորդության հավատի փրկության դրոշմն էլ Ռեթանուների վրա էր դրվում, անմարմին Լաբանից ազատվում էին. բոլորի առութեար երկնքում գրվում: Մի ժամանակ արձակված աղավանին Նոյին ձիթենու շյուղի միջոցով ջրի ցածր լինելը էր ավետում, իսկ այսօր Սուրբ Հոգին Հորդանանի վրա աղավանակերպ իշնելով, այն վերին ազատության, որինքորության շնորհների կտակը մատուցեց՝ ցուց տալով Բանն Աստծո աստվածախառն⁷ մարմինը, որ մեր այս հողամյութ բնությունից մաս վերցնելով՝ ձիթենու շյուղի նման իր արարչական ողորմությունը մեր մեջ վար հոսեցնելով ծավալեց:

11. Այսօր եկած Բանն Աստված աստվածախառն մարմնով Հորդանանի հոսանքների մեջ է գալիս-իշնում, Հովհաննեսից մկրտվել խնդրում: Կարապետը զարհուրդելով՝ փառի Տիրոջ եւ էր ամսում ասելով. «Ես՝ ծառա և ստեղծվածն, ինչպես տերեկի Տիրոջ և արարածների Արարչի, ծովն ու ցամաքն Ստեղծողի մկրտեմ»: «/Դու/, որ երկինքը վրանի պես փոնցիր, որ ճրա վերնահարկերը ջրերի վրա հաստատեցիր, որ հողմերի թևերի վրա ես զնում» (Սահմ. ԾԳ 2-3), որ Հոր և Սուրբ Հոգու մետք քերովքների մեջ ես նստում, [դու], որ բոլոր արարածներից անվայրափակել ես, որից սերովքները սարսում են, իսկ քերովքները՝ զարհուրդ-դողում, հոգեղեն և հրեղեն անմուն բանակների բյուրավոր գորքերը խուճապահար սոսկում, [դու], որ փառքի աթոռին ես նստած և անդունդներին ես նայում: [Դու], որին Մովկեսը քարածերպերի մեջ մտնելով, տեսանել չկարողացավ, Եղիան էլ Քորեք լուսն վրա, քո անկրելի փառքի խուճապահար, թիկնոցով իր դեմքն էր քողարկում-ծածկում: Երկինքն ու երկիրը քո անպարագոնի փառքով են լի: Ես արժանի չեմ քո կոշիկների կապերն էլ արձակելու, մտքի վեր քո անճառելի տնօրինությանը հասու լինելու: Որովհետև եթե տերունական զլիսի եմ հանդգնում մոտենալ, հոգեղենների բանակներն ինձ վրա զայրանում են, իսկ սերովքները, քերովքները և երկնքի բոլոր պետությունները խեթ են նայում ինձ»:

12. Կենարարը պատասխանեց. «Այսպես արժան է բոլոր առաքինությունները լրացնել՝ բազմասաց մարդարեների խոսքը կատարելով: Որովհետև այն ծածկված խորհուրդը, որ հավիտյան լոել-դադարել էր, այսօր մարդկային բնությանը պիտի հայտնի դառնա: Իմ արարածներին ու իմ ձեռքով ստեղծվածներին պիտի գթամ, [Ճրանց] առաջին անկումից պիտի կենարացնեմ: Եվային նորից պիտի տաժանելի և ախտաբեր երկումքներից, որդենության կործանման վտանգից ազատեմ, մարդկանց պիտի ընկած հրեշտակների տեղը հրավիրեմ: Սերովքեափակ դրախտի դրույթ բացելով՝ մարդկային ցեղի համար դեպի կենաց փայտը ճանապարհ պիտի ստեղծեմ: Կամակոր զազանին սպանելու համար եմ իշել,

⁷ Տիրոջ մարմնի «աստուածախառն» որակումն առկա է ինչպես Ընդհանրական, այնպես էլ մեր Եկեղեցու հայութերի գրվածքներում, տե՛ս Նոր բաղդիրը հայկագետն լեզուի, երկասիրություն երից կարդապետաց յաշակերտության մեջին Մխիթարա արքաթօռ Հ. Գարդիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիրմէլեան, Հ. Մ'կրտչի Աւգերեան, Բ. Ա. Վկնեստիկ, 1836, էջ 323:

մարդկանց կորուսչին ջրով պիտի կործանեն: Կամակոր վիշապի գլուխը ջրերի վրա փշրելու համար եմ իշել: Պերճացած վիշապին Հորդանանի հոսանքներում պիտի կոխուտեմ. նեթանուաների համար ճանապարհ պիտի ստեղծեմ՝ Հոր մոտ երկինք բարձրանալու: Օսրված մարդկանց պիտի հնարավորություն ընձեռեմ վերին հրեշտակներին հանդիսակից լինելու: Խորհսուացած մահվան բնությունը պիտի բանդեմ, դժոխքի պերճացած պետությունը պիտի խորտակեմ»:

13. Սուրբ և երջանիկ Հովհաննեսն այս խոսքերի վրա հրճվեց, աղաղակեց ու ասաց. «Ահա Աստծո գառը, որ մարդկային ցեղի մեղքերը վերցնելու եկավ: Ծշմարիտ Աստված և մարդ, անժանանակ Աստծո Որդին Մարդու Որդի դարձավ ու կոչվեց, որպեսզի մարդկանց Աստծո որդիներ դարձի»⁸: Եվ երբ Բանն Աստված Հորդանան իջավ, առհասարակ բոլոր ջրերի բնությունները մաքրվեցին՝ աշխարհի մեղքերը ողողելով ու մաքրելով, - ինչպես որ Նոյը ջրելով ժամանակ հսկանաների հովությը կործանեց: Եվ Հովհաննես Մկրտիչ Կարապետը երկինքը բացված տեսավ ու հայրական ձայնը՝ երկնքից, որ աղաղակում էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որին արուապակից էլ առաջ արգանդից ծնեցի»: Սուրբ Հոգին էլ աղակուն կերպարանքով իջնում էր, որպեսզի Հորդանանը մկրտության ավագան դարձա՛ իմ հանուն փրկության ու կյանքի, աշխարհը որդեգրության շնորհներով վերածնելու: Իսկ այս նորի, երկրավորի անեղծ ու անապական պատկերն ամբողջովին վերաստեղծի՝ ապականված ցանկությամբ հին մարդուն մերկացնելով, անօրեն չար վիշապի թույնը փսխելով, ականջներն օճի դավաճանական թույնից մաքրելով և անեծքների փշարեր պատուհան էլ վերացնելով: Փառքի Հայրը վերևից ձայնում էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որ անհնագանի Աղամի պատկերն ստացավ և զրա բնությամբ իմ կամքը կատարեց»:

14. Այսօր երկինք ու երկիր նոր եղան, որովհետև բոլոր ջրերը մաքրվեցին՝ ամբողջ աշխարհը որդեգրության համար վերածնելով: Այսօր առաջին խավարն ավարտվեց, որ սփոված անգարդությունն էր բռնել: Այն համատարած և համափյուռ լուսը բոլոր մարդկանց լուսավորեց, ովքեր եկել են այս աշխարհ և գալու են: Այսօր Հորդանանը առաջին ջրելով նման անօրենին և կարծեցյալ իշխանին իր դեմքի բազմությամբ ընկլմեց: Իսկ Նոյի զավակին զարդարեց, աղավնարեր ձիթենու շյուղով փրկեց, ում այսօր որդեգրության կտակը երկնքից բերեց:

Այսօր Մովսեսի Տերը և առլր մարգարեներին Առաքողը Հորդանան է ճեղքում, մկրտության ավագան է Բիջ և ամպի լյան Անանությամբ՝ կառուցում: Սուրբ Հոգին էր բոլոր հավատացյալներին առաջնորդում, հովանավորում և պահպանում, իսկ անմարմին փարավոնին իր դիվազունդ բանակներով հեղձամահ կործանում Կարմիր ծովում: Ավագանի միջոցով Քրիստոսի մահվամբ մկրտվելով՝ ջրի մեջ թաղվեցին, մեզ համար չարչարված Բանի, մեծ և զենման պատարագին խաչակիցներ դարձան: Եվ նոր Խարայելը, Առորափետուր ճառագայթներով լուսավորվելով, Վերին Երուսաղեմն են մեծարում և նոր երգում:

15. Տիրոջն օրինենք, որ փառավորված [է], որ այսօր աստվածախառն մարմնով Հորդանանում մկրտվեց, իմ կերպարանքն [առավ], ինձ համար նախամոր մեղքը առավ: Այս-

⁸ Այս մասին տե՛ս Գրիգոր Տաթևացի, Ոսկեփորիկ, Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Հակոբ Քյուելամի, Երևան, 1995, էջ 260:

օր Աստվածորդու՝ Հորդանան իշմամբ Մ'եռայից շուրջ քաղցրանում է և հեթանոսները նորոգվելով զվարճանում են. Խրայելին են ընծայվում տասներկու աղբյուրներն ու արմավեհների նուղերը, որոնք տասներկու առարյալների առաջին խմբի օրինակն են, մաս յոթանասում, որոնց Տերը ցուց տվեց. ուրիշ յոթանասումներկու աշակերտների էլ, որոնց բոլոր հեթանոսներին կանչելու ուղարկեց: Խսկ այն, որ Եղիան ողջակեզների սեղանը շրով ծածկեց, ու հետո երկնքից հուր իշավ և ողջակեզներն այրելով լափեց,- կիհնեն Օրանց համան, ովքեր մկրտության ավագանում են ծածկվում, շրի մեջ միարժուում. աստվածության հուրն իշնում է, հին մարդու գործերը ճարակում և Աստծո պատկերով, փառքով նորոգում:

Եվ այն, որ Եղիսեն ջրերի ակունքը գնաց, օրինեց ու երկրի բնակիչներից մահն ու անգավակությունն վերացրեց,- [Աշանակում է, որ] երբ քահանան ավագանն օրինում է, հալածվում, դուրս են եղում չարի բոլոր մեքենայությունները, որ եզ՝ չարչարանքները, հոգեր և մարմնակոր կոքերը: Սուրբ Հոգու շնորհները ցած են իշնում և հովանի դառնալով նորածին մարդու վրա հնազչում: Եվ որ մարդարեն Նեեւան Աստրուն Հորդանանում յոթ անգամ մկրտվել հրամայեց. ապականությունն ու մարմնի բորոտությունը Օրանից հետացան, որովհետև ովքեր հավատով են մկրտության ավագանն իշնում, վերստին [Սուրբ] Հոգու յոթնարիխան շնորհներով են զգեստավորվում, հին Աղամին մի կողմ դեմելով՝ այս նորով են նորոգվում: Նաև Մովսեսին այն ժամանակ հրամայվեց բորոտի մաքրության համար կենդանի շուրջ կարմիրի և եղևու փայտի հետ մանելով վերցնել, որ Քրիստոսի կողից բխած արյունն ու ջուրն են խորհրդանշում Ավագանի մաքրության և փրկությունը ճաշակելու համար: Բժիշկները զորավոր և օգտակար դեղները ոչ միայն մարմնի արտաքին մասերն օծելին են օգտագործում, այլև Օրանցով ըմպելիքները շաղախելով, որովայնի մեջ են առնում մշտապես:

16. Այսօր մեզ Եղիսենից աղբյուր բխեց, բոլոր հեթանոսներին վերցնում-նորոգում է, իսկ այս մեծ և ծարավ անապատը՝ հեթանոսների եկեղեցին, զվարճացել է, Հորդանանն էլ ավետարեր ծավալմամբ պատրաստվելով բաժանվել չորս գետերի, որոնք են՝ Մատթեոսը, Մարկոսը, Ղոկասը, Հովհաննեսը, որպեսզի ամբողջ աշխարհին Քրիստոսի աստվածությունը ճանաչեցնեն: Ի դեմք Քրիստոսի աղաղակեց Եսային. «Ահա իմ Տեր Աստվածն ու իմ Փրկիչը, իմ փառքը, իմ օգնությունը, իմ համար է փրկություն եղել. նոյս Օրա վրա որեցի: Ուրախության ջոր վերցրեք փրկության աղբյուրից» (Ըս. ԺԲ 2-3), այսինքն՝ Հորդանանի հորձանքներից, առաքելական քարոզությամբ: Եզեկիելը հոչակում է. «Զեզ վրա մաքուր ջոր եմ ցամելու, և ձեր բոլոր մեղեքներից մաքրվելու եք: Զեզ նոր սիրու եմ տալու, ձեր մեջ նոր հոգի եմ դնելու, իս Հոգին ձեզ եմ տպու» (Եզեկ. ԺԶ 25-26): Որովհետև երկաթը սև ու սառն է, իսկ երբ քուրա է մտնում, առկայանող ճառագայթներով բոցափայլում է՝ շերմային հյութով արտաշիկացած: Խսկ մոմի և կապարի հյութը շատ էժան է, բայց երբ թագավորական մատաճի է [Օրանց] վրա դրոշմվում, թամկանում է և աշխարհներ է շարժում ու զարհություննում: Նոյնային մենք էլ մի ժամանակ տիսա և տկար էինք, այսօր ավագանով լուսավորվելով՝ Քրիստոսի հետ բոցափայլում-պայծառանում ենք, աստվածային և արքունական պատկերով զծագրվում, վերին կայարաններն ենք հրավիրվել և վերին զորքերին ձայնակցելով աղաղակում ենք՝ ասելով: «Այսօր սուրբ, պայծառ և աստվածային այս տոնը, հրանուտ և աստվածապետական Սուրբ Հոգին մեր աշխարհին բխեց՝ մաքրելով ջրերը և վերստին ծնելով հեթանոսներին՝ որդեգրության ժառանգությամբ»:

17. Այսօր այս երկիրը նոր երկինք եղավ, որովհետև անճառելի Բանն Աստված և անժամանակ Աստծո Որդին այս կյանքում երևաց և մարդկանց հետ կենցաղավարելով, շըրջեց, Հորդանանամի շնորը եկավ՝ մաքրելով դրանք, և մարդկանց՝ նորածիններին հոգևոր ջրով, իրաշափառ լուսով լուսավորելով: Այսօր նուանձնյա աստվածային Երրորդությունն ու համազոր Տերությունը երկնքից ցած իշխավ. ամբողջ երկիրը պրա անպարագրելի փառքով լցվեց-ծավալվեց. Հայոն էլ վերոկից վկայում է վերածնունդը: Ասում է. «Դա' է իմ սիրելի Որդին, որին հավանեցի» (Մատթ. Գ. 17): Խակ Սուրբ Հոգին Նրան աղավնակերպ իշմամբ հայտնեց և մարդկանց որդիների մեջ իշխավ-տարածվեց: Այսօր անմարմինների զինվորությունները հիմանում-օքարմանում էին, մարմնացյալ Բանին երկրի վրա սպասավորում, երկնքում էլ, փառքի աթոռին, Հոր և Սուրբ Հոգու հետ փառավորում: Այսօր եկեղեց, վերածնված նոր ժողովուրդներ, ցածությամբ և որախությամբ հրեշտակների հետ երկրներում տոն անենք, որովհետև փրկության օրը, որդեգրության ժամանակը եկավ-հասավ մեզ. հրեշտակների բազմություններն էլ, երկնքից իշմելով, տոնակից են լինում մեզ՝ երկնքից Հորդանան իշխած Վերածնորդին տեսնելով, որ վերամաքրել է մարդկանց:

18. Այսօր երկինքն արդարությունը ցողելք-բխեցրել է, որովհետև մեր մեզ վերասին արդարության Արեգակն է ծագել, և այս աշխարհն անշիշխանելի ճառագայթներով Սուրբ Հոգու իշմամբ համագոյական, անսկզբանական մարմնացյալ Բանի վրա պայծառացրել-լուսավորել է: Այսօր Ըստիանորական Կաթողիկե Սուրբ Եկեղեցին լուսագարդվել է, պայծառացել, որովհետև հավատիաններից առաջ Հորից ծնված Որդին երկրի վրա է երևացել և Եկեղեցու մարմնի փեսա և գլուխ դարձել: Այսօր աստվածային ամպից վար բխած արդարությունը և անմահության երկնաբերք ցողը երկրի վրա ծավալվեցին:

Այսօր համատարած ծովան ու Հորդանանը Տիրոջ աստվածային գարշապարների առաջ ճանապարհ է բացել, ինչպես գրված էլ է. «Թո ճանապարհները ծովում են, շավիդներդ էլ՝ հորդառատ ջրերում» (Սաղմ. ՀԶ 20): Այսօր անհաս հասնում է, անտեսը՝ տեսնում, անժամանակն է՝ սկսվում, ժամանակի մեջ մարդ լինում: Այսօր աստվածների Աստվածն ու բոլորի թագավորը մարդկային ցեղի փրկության համար եկել, իր ստեղծածի ձեռքով մկրտվում է:

19. Այսօր բոլորի թագավորն իր աստվածային գլուխը յուր ստեղծածի առաջ է խոնարհեցնում, որպեսզի մեզ երկինք՝ անեղծ ուրախությունների կամչի: Այսօր բլուրները ճառագայթներով են փայլում, լեռները՝ պայծառանում-լուսավորվում, բարձրաբերք կորիակները՝ արդարություն բխեցնում: Որովհետև ով երկինքների բարձունքներում էր բնակվում, Հերմոնի լեռը գալով՝ աստվածախան մարմնով Հորդանանի հոսանքներն է մաքրում, որը մեզանցից է վերցրել՝ շրի մեջ թաղվելով: Այսօր աղբյուրները մարդկային ցեղի մաքրության համար ավելի հստակ են բխում, որովհետև սերովենների թագավորը, արագապես և ճըշմարտապես երջանի Կույսից մարմին առնելով, մարդկանց նորոգեց: Այսօր ծովը ու գետերը բոլոր ձկների հետ խայտալով՝ ձեռքով ծափ կտան, Քրիստոս արքային կօրինեն, որ իհն Աղամին շրի մեջ թաղեց և նորերին ճարտարապետեց՝ ճահիսկին փառքին դարձնելով:

20. Այսօր ճախճախաց Կարապետը դողլալով կանգնած էր Նրա՝ առաջ, ով աշխարհի մեղքերը վերցնելու եկավ: Այսօր հավիտյաններից առաջ [ծնված] անսկիզը Աստված, որ Հոր անճառելի ծոցից [է], հողանյութ և մարմանացու ծառային է խոնարհվում-իշմում՝ աշխարհի կյանքի համար: Այսօր կանանց ծնունդների մեջ մեծը սարսափած, դողլալով կանգ-

նած է՝ իր առաջ մարդկանց մոտ եկած Աստծուն տեսմելով։ Այսօր անապատից Հորդանան եկած գերազանց, երշանիկ և աստվածային մարզարեն աստվածային զլիխն է հավում-մերձենում, որպեսզի այս ժող լվացմամբ Եվայի աղտեղությունը մաքրի։ Այսօր երկնքից եկած հայրական ձայնը աշխարհը Հոր փառքի որդեգրության կանչեց։ Այսօր աստվածապետական Սուրբ Հոգին աղավնակերպ իշմամբ Հորդանանի հոսանքները մաքրեց, երկինքն էլ բացելով՝ աշխարհը որդեգրության կանչեց։ Այսօր անպարազրելի, մըշտընքենական Աստված մարմնի մեջ պարագրվեց-ամփոփվեց, անճառապես մարմնի մեջ որպես ճշմարիտ մարդ էացավ-գոյացավ։ Այսօր մկրտությամբ Քրիստոսի հետ շրի մեջ թաղվեցինք, նրա մահով նրա հետ վերստին ծնվելով՝ նրա հետ կենդանացանք, նրա հետ էլ կթագավորենք [հավիտենական] կյանքում։ Այսօր կուապաշտ մոլորության ստվերը մարդոց, մարդիկ մեղքերից ազատվեցին և հրեշտակների հետ թևածելով՝ պայծառանում և լուսազարդվում են։ Այսօր մեղսաճաշակ պատրողների մեզն ու մատախուրը, որոնք Աղամի անձնելու պատճառով [էին], հալածվեցին, քանզի Քրիստոս գալով մեզ համար անձք եղավ նրանց և նրանով օրինվեցին բոլոր երկրածին ազգերը։

21. Այսօր Հորդանանի շրերը մեզ որպես փրկություն տրվեցին և ինչպես խունկ փայլում են անմահական դեղը, անկողոպտելի ուրախությունն անեղծությամբ այս անսպառ կյանքում մատուցելով։ Այսօր բոլոր արարածները Քրիստոսի ճշմարիտ մարդեղությամբ լուսազարդվեցին-պայծառացան։ «Որովհետև մեզ համար աղքատացավ նա, ով մեծատուն էր, որպեսզի մենք նրա աղքատությամբ հարստանանք» (Բ Կորնթ. Ը 9): Հորդանան իշավ, որպեսզի [մենք] բարձրանանք։ Այսօր կորատյան շավիդները կորացան, պատրաճների ճանապարհները փակվեցին, և մարդկային ցեղի համար ճշմարտության ճանապարհն ու պղոտան հորինվեցին՝ շրով և հոգով անվախճան կյանքում վերածնվելով։ Այսօր սուրբ սերովքեի հրեղեն սուրբ կենաց ծառից վերցվեց, որովհետև արքունական զգեստով պանվեցինք՝ շրով վերածնվելով, որի առաջ սերովքն տեղի տալով՝ կենաց ծառի շավիդներն է բացում։

Այսօր տրտությունից ազատվեցինք՝ հագնելու համար այս նոր՝ «քրիստոնյաներ» անունը, Ավագանի վերածնությամբ Քրիստոսով զգեստավորվելով, Քրիստոսի հետ ծառանցորդներ դառնալով։ Այսօր անսպառ և անվախճան ուրախությունների հրավիրվելով՝ Քրիստոսի հետ լուսավորված ժառանգեցինք, և մեր Տեր Հիսուս Քրիստոսով անսպառ և անվախճան ուրախությունների հասնելով կվերափոխվենք, ընդ որում միաժամանակ Հորն ու Սուրբ Հոգուն վայել են փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյան հավիտենից։ ամեն։

**Աշխարհաբարի վերածն
ՏԻԳՐԱՆ ՄՐԿ. ԲԱՂՈՒՄՅԱՆ**